# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«Ռեմլուքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի Պլտինի 5/1 հասցեում հանդիսությունների սրահի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսման (2-րդ լսում)**

*Լճաշեն բնակավայր*

*30.09.2025թ*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ սահմանված կարգով 2025թ. սեպտեմբերի 30-ին, ժամը 09:30-ին Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի Պլտինի 5/1 հասցեում հանդիսությունների սրահի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, Գեղարքունիքի մարզի հողաշինության բաժնի պետ Մարատ Ղուրշուդյանը, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչ Դավիթ Զանգեզուրյանը, Սևան համայնքի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Հայկ Ղուկասյանը, Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավար Վահան Մարգարյանը, «ԳՐԻՆ Թայմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արսեն Հարությունյանը, բնապահպանական մասի պատասխանատու Քրիստինե Սահակյանը, համայնքի բնակիչներ:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, ով հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ, որ փորձաքննական գործընթացի ժամկետը սահմանվում է 40 աշխատանքային օր, որ այս փուլից հետո, օրենքով սահմանված կարգով տրվելու է պետական փորձաքննական եզրակացություն:

Հաշվետվությունն օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններին կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային

լսումներ: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է: Հանրային լսումների վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող թերթում, փակցվել է մարզպետարանի, Սևանի համայնքապետարանի շենքում փորձաքննական կենտրոնի և համայնքապետարանի պաշտոնական կայքերում:

Այնուհետև փորձաքննական կենտրոնի մասնագետը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները, մեղմող միջոցառումները, մշտադիտարկումները:

Գոհար Մինասյանն անդրադարձավ մթնոլորտային օդի պահպանության միջոցառումներին, ներկայացրեց նաև հաշվետվության վերաբերյալ դիտողությունները, կապված հաշվետվությունում աղմուկի և թրթռման մակարդակի վերաբերյալ տեղեկատվության բացակայության հետ, ինչին Քրիստինե Սահակյանը պարզաբանեց, որ մոտակայքում՝ նվազագույնը 70մ շառավղով շինություններ չկան: Կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ:

Գոհար Մինասյանն անդրադարձավ նաև Սևանա լճի փորձագիտական հանձնաժողովի կողմից տրված դիտողություններին կապված մաքրման կայանի աշխատանքի արդյունավետության վերաբերյալ (կեղտաջրերի, կայուն, ոչ սեզոնային հոսքի, նրանում մաքրող նյութերի բացակայության և այլն) տեղեկատվության բացակայությանը, կեղտաջրերի մաքրման և հեռացման մասով շրջակա միջավայրի նախարարությունից ջրօգտագործման թույլտվության ստացման առաջարկության վերաբերյալ, քանի որ Ջրային օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «Կեղտաջրերը և ցամաքուրդային ջրերն ընդունելու համար արգելվում է կլանող հորատանցքերի և ջրհորների կառուցումը: 60մ³ ծավալով մաքրված ջուրը դրենաժային հորի մեջ ներծծման միջոցով ստորերկրյա ջրային հորիզոններ ուղղելու հարցին, ինչի համար անհրաժեշտ է ստանալ համապատասխան թույլտվություն: Ինչին ընկերության ներկայացուցիչ Քրիստինե Սահակյանը պարզաբանեց որ օգտագործվում է բարձր արդյունավետության մաքրման կայան:

Գոհար Մինասյանն անդրադարձավ նաև սեփականության վկայականում հողի նպատակային և գործառնական նշանակության անհամապատասխանությանը, միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերով հաստատված նպատակային և գործառնական նշանակությանը:

Քրիստինե Սահակյան նշեց, որ ինչ վերաբերվում է միկրոռեգիոնալ մակարդակի համապատասխան տարածքի պլանավորման փաստաթղթերում առկա նպատակային և գործառնական նշանակությունների անհամապատասխանությանը՝ սեփականության իրավունքի պետական գրացման մեջ նշված նպատակային և գործառնական նշանակություններին, ապա «Ռեմլուքս» ՍՊԸ-ի կողմից օրենքով սահմանված կարգով փաստաթղթեր են ներկայացվել դրանք վկայականին համապատասխանեցնելու վերաբերյալ, որոնք ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կողմից ուղարկվել են ՀՀ Քաղաքաշինության Կոմիտե: Ներկայացված փաստաթղթերի շարքում, ի թիվս այլոց, առկա են նաև «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից տրված գրությունը առ այն, որ գործունեության տարածքը չի հանդիսանում Սևան ազգային պարկի տարածք, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից

տրված հնագիտական ուսումնասիրությունների վերաբերյալ եզրակացությունը, համաձայն որի տվյալ տեղամասը զուրկ է հուշարձաններից և գործունեության տարածքում հնագիտական որևէ հուշարձան (կառույցներ, կոթողներ կամ դրանց մասեր) չի փաստագրվել, հնագիտական գտածոներ չեն հայտնաբերվել:

Մարզպետարանի ներկայացուցիչը ևս հաստատեց, որ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կողմից համապատասխան փաստաթղթերն ուղարկված են Քաղաքաշինության Կոմիտե:

Հաջորդեց ընդհանուր բնույթի քննարկում, հիմնականում ընթացակարգային, հետագա հարցերի վերաբերյալ, որից հետո հանրային լսման պատասխանատուն ամփոփեց և փակեց հանրային լսումը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Գոհար Մինասյան

«Ռեմլուքս» ՓԲԸ-ի -ի տնօրեն՝ Վահանգն Մելիքյան